

ՄԱՏԵՆԱԻՉՈՍԱԿԱՆ

ԵԽՈՆ ՄԱՆՈՒԷԼՆԱՆ. Դէ ալ ը վեր, դրամատիկա-
կան պօէմա. Ս. Պ. 1902

Գամառ-Քաթիպալի քնարի վերջնական լոռութիւնից յե-
տու մեր նորագոյն զրականութեան բանաստեղծական մասը
որբ է մնացել. չկալ մէկը, որի երգերը կարողանալին ընդհա-
նուր ողևորութիւն ներշնչել և լուզել անմխիթար մնացած հայ
ժողովրդի տակն ու վրալ եղած սիրտը. ձիշտ է, հրապարակի
վրալ երևում են միջակ կամ փոքր չափով տաղանդ ունեցող
բանաստեղծներ, սակայն դրանց մէջ չկալ այն հեղինակաւորը,
որ միւսների համար իբրև ուսուցիչ և օրինակ ծառակէր.—
կալ մէկը, որ սկզբում արդ հեղինակութիւնը վախելու ամեն
տեսակ լուսեր տուեց, սակայն լեռու նրա գրիչն ալնքան
ծով հանդիսացաւ, որ մեր լուսերն էլ ի դերև ելան.

Առն Մանուէլեանը մեր միջակ բանաստեղծներից մէկն
է և երբեմն-երբեմն հրապարակ է գալիս գրական ասպարի-
զում՝ իւր մեծ ու փոքր գրուածքներով. Ալս անգամ նա պօէ-
մալի նիւթ է դարձրել Դորպատի համալսարանի ուսուցչապետ
հանգուցեալ Պարքօտի Մասիսի դադաթը բարձրանալը և իւր
գրուածքին պիէսի ձև տալով՝ անուանել է «դ ը ա մ ա տ ի կ ա-
կ ա ն պ օ է մ ա».

Ա Խսկապէս Մասիսի գագաթը բարձրանալը գիտնական
նապատակով, ոչինչ առանձին նիւթ չէ մատակարարում ոչ պօէ-
մալի և ոչ էլ մանաւանդ դրամատիկական պօէմալի համար։
սակայն այն հանգամանքը, որ Մասիսը մի տեսակ սրբազան
վալրի լատկութիւնն ունի, և արդ վերելքին մասնակցում է
նաև Խաչատուր Աբովիանը, արդ չոր ու ցամաք նիւթին կեն-
դանի տարրեր են աւելացնում։

Բայց պ. Մանուէլեանը՝ իդուր է պիեսի ձև տուել ալք պօէմալին, քանի որ չնախելով մէջ բերած մի քանի աւանդութիւններին և կենդանի խօսակցութիւններին, ալնուամնալին նիւթն իբրև բ և մտ կ ա՞ն գ ր ու ա ծ ք շատ շոր ու ցամաք է և անհետաքրքրական ժողովրդի համար ։ Իրըն լոկ բանաստեղծութիւն, նորն իսկ պօէմալի ձեռվ, աւելի արժէք կունենար ադէ պ ի վերը և հաճութեամբ կկարդացուէր։

Պ. Մանուէլիանը մի քանի խօսքով բացատրելով իւր պօէմալի նիւթը աւելացնում է. «Այս վերելքը միենոյն ժամանակ մի տեսակ խորհրդաւոր և կարծես ճակատազրական նշանակութիւն է ստանում մեր աշքում, շնորհիւ ալն հանդամանքի, որ պրօֆ. Պարրօտը, աւդ մարդասէր և լուսամիտուսումնականը, շփուելով Արովեանի հետ, որ հաղիս 24 տարեկան էր, իր սեփական օրինակով վառեց նրա մէջ գիտութեան տենչը և մի բուռն, անդիմադրելի ձգուում դէսլի կատարելութիւն»։

Բուն պօէման երեք տեսարանից է բաղկացած և ընդամենը բանում է 35 փոքրադիր էջ։ Առաջին տեսարանը ներկալացնում է սրբ Յակովբալ վանքը։ Մասիսի ստորառում, ուր վանահօր հետ դրուցում են ուսուցչապետ Խրիդրիխ Պարրօտը, Խաչատուր Արովեանը և միւս ուղեկիցները։ Վանահալքն անկարելի է համարում Մասիսի զագաթը բարձրանալը և պատմում է սրբ Յակովի աւանդութիւնը։ Պարրօտը զարմանում է, որ ամենքն անկարելի են համարում ալդ և ի միջիւ ալլոց ալսպիսի դատողութիւններ է տալիս։

«Անկարելի է, անհընարին է!»
Զօրս կողմից հընչում է (են) միաբերան։
Եւ մի զարաւոր նախապաշարում
Մինչ հր աստիճան կարողացել է
Կապել, կաշկանդել մարդկալին միտքը
Եւ մտածմունքը! կարծես ամենքի
Պաշտամունքն է—«չը շարժւել տեղից,
Քալլ առաջ չ'երթալ, քալլ առաջ չ'անել
Դէսլի վեր, դէսլի լուսու աշխարհը!»
Բայց զիտութիւնը, որ մնազօր է,
Պիտի բաց անէ իր ճանապարհը։
Նըրա նորոգիչ ճառագալթները
Պիտի թափ անցնեն աշխարհի մթին,
Խուլ առկիւնները, և խաւարի մէջ
Լոյս պիտի շողալ!»

Երկնահուսպ լերանց կուսական բարձունք,
Խորունկ լատակըն ովկեանոսների,
Երկինքըն անթիւ լուսատոներով—
Ամբողջ տիեզերք—իրանց գաղտնիքը
Բողոքը պիտի երևան հանեն
Գիտութեան առաջ!» և այլն»

Երկրորդ տեսարանը Մասիսի վրայ է կիսաճանապարհին
իսկ երրորդ, վերջին տեսարանը դարձեալ սր. Յակովաք
վանքի գաւթում, վերադարձին։ Արովեանը ոգնորուած պատ-
մում է վանահօրը.

«Եւ ինչ տեսարան բացւեց մեր
առջեւ...

Մի սովորական բընութիւն չէր ալն,
Այս գերահանճար Արարչագործի
Հըսկաւ վըրձինով համարձակ քաշած
Վիթխարի և վիճ մի գեղանըկար
Մի անձալրածիր հորիզոնի տակ!
Ճատ հեռու, ամպի կըտորների պէս
Դէպի կապուտակ երկինքն ամբարձած,
Նըշմարւում էին Ելրուս և Կաղքէկ.
Իսկ աւելի մօտ՝ Գեղամալ վճը
Թագնուած եզերքի սարերի ետև
Եւ կոլսի նման մի աչքի ծալրով
Ծրկտի էր տալիս արեղակի տակ
Ակն կողմ Սևալան, Սիփան սարերը
Եւ քանի քանի լեռնաշղթաներ
Ընկած էին մեր աչքի առջեւ,
Կարծես ծովի զոռ ալիքներ էին՝
Մի ակնիւարթում լանկարծ քարացած...»։

Մի թիւրիմացութեամբ, թէ անդիտութեամբ պ. Մա-
նուէլեանը սր. զրքի աւանդական դրախտը Մասիսի վրայ է
համարում.

«Ալեղարդ հըսկան!... Այստեղ էր դըրախտ,
Ըստ աւանդութեան, առաջին մարդկանց
Ակն երանաւէտ բընակատեղին.
Եւ ախտեղ էր, որ առաջին անգամ
Եղբակը եղբօր զէմնախանձով վառւած՝
Գործեց ժանտ ոճիրն արիւնհեղութեան»։

«Պարրօտ. Այն,
Ակս Արարատեան դաշտի կոթողը,
Որ Աստուած ընտրեց, իրբն մարդկութեան
Առաջին օրբան...»։

Արդ՝ ըստ սր. Գրքի աւանդութեան, լաւանի է, որ Արարատը հչ թէ մարդկութեան առաջին, ալ և ը կ ը ո ր դ օրբանն եղաւ, աշխարհակործան ջրհեղեղից կտոր, Առաջին անդամն է լսում, որ դրախտը Մասիսի վրայ է եղել:

«Դ է պ ի վ ե ր ը» գրուած է անդամութեան տաս, վանկեան չափով. լեզուն պարզ և հալերէն է. պատահում են նաև մի քանի նորակազմ անտաշ բառեր. ինչպէս օրինակ աւ ը ձ ա գ ա ն ք ե ց ի ն»— արձագանք տուին— «Թ ը լ ս պ ե ր՝ լսուլ որոտումներով», կան թէև սակաւ, անճիշտ ոճեր. օրինակ,

«Ան մաքուր ձիւնը ջըրի տեղ կ ը տար» (կրոնի). Հալերէն հարցական և զարմացական նշանների հետ գործ են ածուած և կրօպականները, որ բոլորովին աւելորդ են. տպագրական սխալների թիւը քիչ չէ.

Ընդհանուր տպաւորութիւնը լաւ է. լանձնարարում ենք իրրն ընթերցանութեան գրքով:

VILLAM WATSON. ԺԻՌԱՆԻ ԱՐԵՒԵԼՔԸ Թարգ. անգլ. Խոսրով. 1903 Բաղիզ:

Վերջին հակական սարսափելի կոտորածների ժամանակ անդլիական մամուլը և առ հասարակ ժողովուրդը մեծ հտմակրանքով էին վերաբերում հալերին. թէ քաղաքական թերթերում ու թէ գիտական պարբերական հրատարակութիւնների մէջ շարունակ գրում էին հալերի մասին. նորն իսկ եղան բանաստեղծներ, որ երգեցին հալի ցաւերն ու վշտերը. դրանց մէկն է Ուիլլի ը մ Ուո թ ս ը ն ը, որի հալերի վերաբերմամբ դրած թախծալի բանաստեղծութիւնները մի զըրքովի մէջ ամփոփուած լուս տեսան և ցալժմ երեք հրատարակութիւն ունեցան:

«Ծ ի ը ա ն ի ա ր ե լ ք ն» ալդ բանաստեղծութիւնների թարգմանութիւնն է. դրանք թուով տասնեօթն են և 30 փոքրադիր էջ են լցնում: Թարգմանութիւնը կատարուած է տաճկահաւ բարբառով, սակալն շատ խրթին լեզուով. զրաբար և շատ անհասկանալի բառերով լի են ալդ բանաստեղծութիւնները. վերնագիրները միայն զրափէ են. «Թուքքը Հայաստանի մէջ», «Վատասիրտ Անգլիա», «Անգլիա առ Ամերիկա»,